# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 59-Ա

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 -րդ կետով, 38 -րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 50-Ն որոշումը

***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝***

1. 2018 թվականի հունիսի 1-ին կազմակերպված երեխաների միջազգային օրվան նվիրված միջոցառման կապակցությամբ, Լեռնանիստ համայնքի 2018 թվականի բյուջեի 08.2.4.51 / /այլ մշակութային կազմակերպություն/ ծրագրի 4239 /ընդհանուր բնույթի ծառայություններ / հոդվածից դուրս գրել ընդամենը 114 000 /մեկ հարյուր տաս չորս հազար / դրամ :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2018թ. մայիսի 30
գ.Լեռնանիստ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094 55-33-04, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 60-Ա

ԳԱԳԻԿ ՍԱՐԻԲԵԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 4-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 29 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ՍԱՐԻԲԵԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գագիկ Սարիբեկի Մկրտչյանի դիմումը և ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի, <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> 2002 թվականի դեկտեմբերի 25-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Գագիկ Սարիբեկի Մկրտչյանին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, չի ընդգրկված ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական, պատմամշակույթային հողերի պահպանման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմաներին, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել Գագիկ Սարիբեկի Մկրտչյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, կադաստրային 07-033-0102-0002 ծածկագրով փաստացի օգտագործվող 0.3195 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ, որը փաստացի օգտագործվել է նրա կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2. Վերականգնել Լեռնանիստ համայնքի 4-րդ թաղամաս թիվ 29 հասցեում գտնվող 0.3195 հա մակերեսով հողամասի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված 117.78 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ Գագիկ Սարիբեկի Մկրտչյանի սեփականության իրավունքը:

3. Հողամասի սահմանները որոշվում են <<ԱՐՏԷԴ>> ՍՊԸ-ի կողմից չափագրված և Լեռնանիստ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

4. Քաղաքացի Գագիկ Սարիբեկի Մկրտչյանին պատկանող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 4-րդ թաղամաս թիվ 29:

5. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի՝ Գագիկ Սարիբեկի Մկրտչյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի և բնակելի տան նկատմամբ ու տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

6. Որոշման կատարման կազմակերպումը ու պատասխանատվությունը վերապահել Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հովհաննես Մարգարյանին:

7. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2018 թ. հունիսի 1

գ.Լեռնանիստ